Ատելության խոսքի վերաբերյալ իրավական կարգավորումները

Նկարագրություն

Ատելության դրսևորումները բազմաթիվ են ինչպես համացանցում, դասագրքերում, այնպես էլ մեր առօրյայում: Շատ կարևոր է հասկանալ, թե պետակա իրավասու մարմինները, ինչպես են հասկանում ատելություն, ատելության խոսք, անհանդուրժողականություն արտահայտությունները և արդյո՞ք այս ամենը կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ և օրենսգրքերով: Ուսումնասիրությունները ընդգրկել են ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունները, ինչպես նաև մի շարք դատական ակտեր, որոնք վերաբերել են ատելության տարածմանը, ատելության խոսքին:

Ուսումնասիրություն

1. ՀՀ Սահմանադրություն

ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին: Նույն գլխի 77-րդ հոդվածը արգելում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

2. ՀՀ քրեական օրենսգրքի գլուխ 10 բաժնում նշվում է պատիժ սահմանելու մասին, և հոդված 63-ը սահմանում է «Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները», որի մեջ կետ 6-ը սահմանվում է հետևյալ կերպ.

- **հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության,** կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը.

Հատուկ մաս, բաժին 7-ի մարդու դեմ ուղղված հանցագործությունների գլուխ 16-ի հոդված 104-ով սահմանվում է կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններից՝ սպանությունը, որի 13-րդ կետը սահմանում է.

-ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով.

Նույն տրամաբանությամբ սահմանվում է հոդված 112-ի կետ 12-ը՝ **Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, հոդված 113-ը՝ Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, հոդված 119-ի կետ 7-ը՝ Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, հոդված 185-ը՝ Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, հոդված 265-ը՝ Դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը:**

Վերջին կետը, որտեղ հանդիպում ենք ատելության հոդված 397-ն է.

Ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը

Համակարգչային համակարգի միջոցով հանրությանը նյութեր տարածելու կամ որևէ այլ ձևով մատչելի դարձնելու միջոցով ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված սույն գլխի մյուս հոդվածներով նախատեսված հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, հավանություն տալը կամ արդարացնելը, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման կամ կրոնական պատկանելության հիման **վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն** աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

3. [Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության մեջ](#) հանդիպում ենք ատելության տարածման դեմ պայքարին Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության ուղղությունները գլխի 30-րդ կետի առաջին ենթակետում.

30. Մտքի, խղճի, կրոնի և դավանանքի ազատության իրավունքի երաշխավորում, որը ներառում է՝

1) **ատելության, անհանդուրժողականության և դրանից բխող ահաբեկման և հարկադրանքի ակտերի դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը,**

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության ծրագրի մեջ ատելությանը, ատելության խոսքին, անհանդուրժողականությանը անդրադարձ է կատարվում ընդամենը այս մի կետով:

4. [ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներից մեկը ուղիղ կերպով վերաբերում է քաղաքական հենքով ատելության խոսքին:](#) 2013թ. նախագահական

ընտրությունների ժամանակ Արարատի մարզի ընտրատեղամասերից մեկում ընտրական հանձնաժողովի Տիգրան Վիրաբյանը հրապարակայնորեն հայհոյել է Անիկ Դավթյանին այն բանից հետո, երբ նա փորձել է ճշտել արդյոք արտասահմանում գտնվող իր հարազատների անունները առկա են ընտրական ցուցակում: Հետաքրքրականը այն է, որ մինչև վճռաբեկ դատարանի որոշման ընդունումը այս հայցը արդեն մերժվել էր ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Լ. Արազյան) (այսուհետ՝ Դատարան) 25.06.2013 թվականի վճռով, ինչպես նաև՝ հետագայում, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.10.2013 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.06.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում է, որ **Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ վիրավորանք գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ՝**

1) Արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, որպիսի փաստն ապացուցելու դատավարական բեռը ողջամտության սահմաններում կրում է հայցվորը:

2) Արատավորող արտահայտությունն այն արտահայտությունն է, որը հասարակության անդամների գնահատմամբ նսեմացնում է անձի արժանիքները հանրության շրջանում, նրան ենթարկում է ծաղրուծանակի**, ունակ է անձին վերածել ատելության կամ արհամարհանքի առարկայի** կամ ստիպում է ամաչել անձին կամ այլ մարդկանց խուսափել տվյալ անձից:

Այս ամենը հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում կայացրեց.

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԻԲԵՌՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ՝ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՌԱՍԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՔՍԵՆՈՖՈԲԻԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թ. փետրվարի 1-ին)

Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիան որպես նպատակ սահմանում է.

Արձանագրության Կողմերի միջև համաձայնությամբ լրացնել 2001 թ. նոյեմբերի 23-ին Բուդապեշտում ստորագրման համար բացված՝ Կիբերհանցագործության մասին Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) դրույթները՝

կապված համակարգչային համակարգերի միջոցով կատարված ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման հետ:

Այնուհետև տալով **«ռասիստական և քսենոֆոբիական նյութ»** տերմինի սահմանում է.

Սույն Արձանագրության նպատակների համար «ռասիստական և քսենոֆոբիական նյութ» տերմինը նշանակում է՝ որևէ գրավոր նյութ, որևէ արտահայտություն կամ մտքի կամ տեսության որևէ այլ արտահայտություն, որը որևէ անձի կամ անձանց խմբի նկատմամբ քարոզում, **օժանդակում կամ հրահրում է ատելություն, խտրականություն կամ բռնություն՝** ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ծագման կամ ազգային կամ էթնիկական ծագման, ինչպես նաև կրոնի հիման վրա, եթե որպես շարժառիթ օգտագործվել է հիշյալ գործոններից որևէ մեկի համար:

Հոդված 3. Համակարգչային համակարգերի միջոցով ռասիստական և քսենոֆոբիական նյութեր տարածելը

1. Յուրաքանչյուր կողմ(պետություն) պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրությամբ՝ դիտավորյալ և առանց թույլտվության կատարված հետևյալ արարքները քրեականացնելու համար.

համակարգչային համակարգի միջոցով հասարակության մեջ ռասիստական և քսենոֆոբիական նյութերի տարածումը կամ այլ ճանապարհով դրանք մատչելի դարձնելը:

Եզրակացություն

Ամփոփելով վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքները, հանգում ենք այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունում ոչ Սահմանադրական և ոչ էլ օրենսդրական մակարդակներում, ոչ էլ իրավակիրառ պրակտիկայում բացահայտված չէ ատելություն, ատելության խոսք եզրույթների էությունը:

Իհարկե, վերոնշյալից կարող ենք ենթադրել, որ ինչ-որ չափով ատելություն, ատելության խոսք կամ ատելության քարոզ տարածողների դեմ փորձ է արվում պայքար մղել, սակայն եզրույթի բացատրության բացակայության պայմաններում այն շատ դեպքերում տարընթերցման պատճառ է դառնում:

Ուսումնասիրությունը փաստեց, որ իրավական հարթությունում Հայաստանը չի պայքարում ատելության, ատելության խոսք տարածողների դեմ: Եզրույթի բացակայությունը օրենսգրքերի մեջ թույլ է տալիս պնդել, որ այսօր օնլայն տիրույթում ատելություն տարածողները կարող են մնալ անպատիժ և գուցե դա էլ հնարավորություն է տալիս ատելություն տարածողներին ընդլայնել իրենց գործունեության ոլորտներն ու ծավալները:

Պնդում ենք, որ այս ոլորտը կարգավորող օրենքի մեծ եւ հրատապ անհրաժեշտություն կա և օրենսդրական կարգավորման գլխավոր խնդիրն է հստակ կերպով սահմանել ատելություն, ատելության խոսք եւ ատելության քարոզ եզրույթներն ու դրանց մեջ պարունակվող վտանգները, ինչպես նաեւ դրանց համար նախատեսել վարչական եւ/կամ քրեական պատասխանատվություն: